

ՀԱՅՔ

Հ Ա Ն Դ Ե Ս

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAİK

AN ARMENIAN MONTHLY JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 341 West, 23rd St., New York, N. Y. Vol. VI, 1896.

ԲՈՎՆԵԴԵԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական նշմարք.— Վաճիկ Կոտորա-
ծը. զանազան աղբիւրներէ տեղեկութիւնք, յե-
ղափոխականք մեղադրելիք եմ արդեօք.— Հայ
Յեղափոխականութիւն. ի Պատ. Ժառն Ս. Բէյ-
նօլտսէ, միսիոնար ի Վաթ.— Նամակք Կ. Պոլսէ.
— Ռուսիոյ կացքը փոխուած է.— Հրէից չա-
րագործ դերը Հայկական Խնդրոյն մէջ.— Խայ-
տառակ լրագրութիւն. Ն. Ե. Հէրալտ թերթը.—
Հայ ամերիկացւոց իրաւունքը.— Այլևայլք:

ԽՄԻՐԼԵԿԱՆ ՆՇՄԱՐԲ

Օգոստոս 10ին Հեռագիրը գուժեց Սր.
ԻԶՄԻՐԼԵԱՆ Պատրիարք Հօր Հրաժարու-
մը: Սուլթանին մէկ նոր յաղթութիւնն է
այդ, կամ նոր տիրանական (tyrannique)
արարքը, Հայ Ազգին դէմ, օգնութեամբ
Հայ երեւելիներէն ոմանց: Թուրքը ինչ չա-
րիք գործած է մեզ երբէք առանց մենէ
ձեռնառնելու ունենալու...: Կեղծաւորաց
կարծիքն է թէ երկաթէ պատրիարքի հը-
րաժարումը հաշտարար գործ մը, խոհա-
կան զիջում մը կը լինի Հայոց կողմէն, և
փատիլահը կը մեղմացնէ իւր դաժանու-
թիւնը անոնց նկատմամբ: Զջմարիտ չէ
այդ: Թրքին առջեւ ո՛րքան խոնարհիս այն-

քան աւելի կը նախատուիս: Փորձը հա-
զար անգամ ապացուցեր է թէ Օսմանցին
միայն ոյժ կը յարգէ, և ստիպուած էր
Սուլթանն իսկ յարգել զՊատրիարք Իզ-
միրէան, որոյ բարոյական զօրութեան ազ-
դեցութենէն չէր կրնար բոլորովին խու-
ստփել: ԻԶՄԻՐԼԵԱՆ իւր բարձր բնաւո-
րութեամբ կանգնեցաւ իբրեւ բերդ մը
անառիկ, որուն նայեցան սքանչանօք
թուրք և Եւրոպացի և Հայ միանգամայն:
Այդ բերդին անկումը աւելի ողբալի է
քան եթէ ամբողջ քաղաք մը աւերէր: Բ.
Դրան անհաշտ և աւելի արհամարհոտ դի-
մադրութեան մէկ նշանն այն իսկ է, որ
զնառն ժողովքը լուծեր է և նոր մ'է ան-
ուաներ ըստ իւր քմահաճոյից, և անոր
ընտրել տուեր է իւր մէկ արարածը,
զԲարթողիմէոս, իբրեւ պատրիարքական
տեղակալ:

* *

Գաւառներուն մէջ սովի սարսափը
մեղմացած է շնորհիւ ամառուան պտուղ-
ներուն, բայց կոտորածի և նոր չարեաց
կասկածը կը զօրանայ: Շատ տեղ թրքերը
կը սպառնան եղեր վերսկսիլ ջարդը: Առ
Ուօշինկիթընի Դահլիճը ուղղեալ հաղոր-
դագրութիւններն ալ կը ցուցնեն թէ նոր
խռովութիւնք հաւանական կը համար-
ուին գալ աշնան համար: Իսկէնտէրունի

միտինարներն Ամերիկայի կառավարութենէն խնդրեցին հնարաւորաբար մը յղել, և Յովային նախարարութիւնն հրահանգ տուեր է ծովապետ Սէլֆրիճի ունենալ զրահաւոր մը կազմ և պատրաստ զէպ իսկէնսէրուն զիմեւը, ե՛րբ որ խռովութեան ամենաթեթեւ կարեւորութիւնը նըշմարտուի:

* *

Անոնք որ հիմակաւնէ բաժանորդ կը գրուին ՀԱՅՔԻ 1897 տարւոյն համար, վըճարելով ԿԱՆԽԻԿ ԵՐԿՈՒՄ ՏՈՂԱՐ, ձրի կ'ընդունին ներկայ 1896 տարւոյ մնացած թիւերը:

Կը խնդրենք Հայքի ամերիկեան և ուրիշ երկիրներու բաժանորդներէն որ անյապաղ հասցենն մեզի իրենց անվճար մնացած բաժնեգրինը:

«ՀԱՅՔ»Ի ԽՄԲԱԳՈՍՏՈՒՆԸ
ԱՅԺՄ ԿԸ ԳՏՆՈՒԻ Ի ԹԻԻ
341 Ուէսթ, 23դ Փողոց:

ՎԼՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

ՉԱՆԱՉԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐԷ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՐ ՄԵՂԱԴՐԵԼԻ՞ՆԵՆ
ԱՐԴԵՐ

Վան ալ կրեց հարուածը. եւ հարուածը սոսկալի է: Ուրիշ քաղաքներու մէջ եղածէն աւելի բան մը պատահած է հոն. սովորական հրդեհումներէն, առեւտուրէն և քարոզէն աւելի բան մը, այն է իբր հնգար երիտասարդներու, այսինքն Վանոյ ուժին, բոլորական բեկումը Պարսկական սահմանագլխոյն մօտ: Նոքա կը փախչէին Վանէն՝ զՎան աղաւելու համար իրենց բացակայութեամբը, քանի որ չէին կրցած պաշտպանել զայն իրենց ներկայութեամբը: Այս տարօրինակ պատահմունքները դատելու փորձ մ'ամեւէն առաջ ակէտք է նախ աչքի առջեւ ունենանք

զէպերը ճշդիւ, որքան կը ներսն մեզ այն սեղեկութիւնները զորս քաղեցինք ամերիկայի միտինարաց, եւ րոպական թերթերու թղթակցաց և հայ լրագիրներու նամակներէն:

Ա.

ԴԷՊՔԵՐԸ

Ընթերցողք այդ զէպերու տրամաբանեալ մէկ ներկայացումը պիտի գտնեն միտինար Բէյնօլտի երկար թղթին մէջ զոր կը հրատարակենք աւելի հետուն: Կ'արժէ որ ի մէջ ընկնենք առ Լոնտոնեան TIMES ուղղեալ թղթակցութենէն հետեւալ կտորները—

«... Թուրք գլխաւոր պաշտօնէից անհամաձայնութիւնն ալ կ'աւելցնէր զըժուարդութիւնը: Իրենց շուարման մէջ՝ նոքա զիմեցին հիւստիստ Ուիլեամսի, որ կարգ մը պայմաններ առաջարկեց, որք եթէ ընդունուէին երկուստեք, ի հարկէ Սուլթանին և զեռպանաց ի Կ. Պոլիս հաւանութեանը ենթակայ, պիտի լուծուէին զըժուարդութիւնք: Թէ և այս պայմանք մեղմ էին Հայոց համար, թէ՛ Թուրք և թէ՛ Քուրդք ընդունեցին զայնս, սակայն հայ յեղափոխական առաջնորդները, այն յիմարտութեամբ որ իրենց բոլոր դործողութեանց բարացուցականն եղած է, յամեցան իրենց հաւանութիւնը ցաւալ, խոստանալով պատասխանել հետեւեալ առտուն: Դեռ պատասխանը չարուած, Թուրք ցոյց մը, Համիա Պէյ, սպաննուեցաւ, սաստիկ հրացանաձգութիւն սկսաւ բոլոր քաղաքին մէջ, և մեծ դժուարութեամբ կրցան Հ. Ուիլեամս և Թուրք իշխանութիւնք զսպել թուրքերն ու զօրքը: Նախընծայ պայմանները այլ ևս անկարելի էէին, ... նոր պայմաններ առաջարկուեցան խոտաբոյն քան զառաջիններն, սակայն և այնպէս աւելի մեղմ քան ապստամբքն իրաւունք ունէին ակնկալելու: Նոքա դարձեալ ժամանակ ուղեցին որ արուեցաւ:

Հետեւեալ առտուն կանուխ (չորաթօր, Յունիս 20,) հրացանաձգութիւնն նորէն ետ ելաւ, իւրաքանչիւր կողմ ամբաստանելով զմիւսն իրեւ նախադարձակ: Հիմա Թուրք իշխանութիւնք ձեռնակեցին յարձակիլ ի հայ յեղափոխականներէն բռնուած զիրքերուն վրայ, և զհետեւեցին քանի մը լեռնային թնդանթներ բլրակի

մը վրայ ճիշդ քաղաքին մօտ: Սաստիկ կրակը շարունակեցին քանի մը ժամ: Հրե-տանւոյն կրակը շատ թափառիկ էր և ու-բերուն քիչերը դպան տներուն, մէկ հաս մ'ալ դպաւ անգլիական հիւպատո-սարանին՝ մղոն մը ի բացեայ, թէ և բարե-բաղդաբար առանց պայթելու: Միսիոնա-րաց տան տանիքէն կարելի էր տեսնել անտի կանոնաւոր զօրքը և Բրդերը կու-տակուած ի բլուրն, քաղաքին հիւսիս-ա-րեւելեան կողմն, մինչ աստի, հեռագի-տակով, դիտել Հայերը որք տներէն և այգիներու պատերու ետեէն կը կրակէին: Կեանքի կորուստը կը թուէր կարի թեթեւ եղած լինիլ երկուստեք, հակառակ հրոց սասակութեան: Կէսաւուր տանները Հա-յեր սկսան տեղի տալ ամեն կողմէ, ետ քաշուելով դէպ ի քաղաքին կեդրոնը: Ժամը չորսին տանները կրակը դադրե-ցան, ասպատամրները ետ մղուած էին, և անոնցմէ լքուած բոլոր տունները շուտով հրդեհուեցան: Ասպատամբաց հզօրագոյն դիրքը անհոյելի մնաց, բայց բաւական ծնծ կերած էին, և մթննայուն մարդ ա-ռաքեցին ծանուցանելու թէ պատրաստ է-ին նկատողութեան առնուլ անձնատու-թեան պայմանները: Հիւպատոս Ուիլեամս գիտցուց նոցա թէ ինչ են պայմանները, զորս լսելով՝ պետքն յայտարարեցին թէ չալիտի ընդունէին զայն և թէ մտադիր էին զիշերով մեկնիլ քաղաքէն: Նոցա բա-ցատուեցաւ թէ այդ քայլը կրնար բոլոր ժողովրդին կեանքը վտանգի ենթարկել, սակայն ի հեճուելու այս վտանգին և այն ի-րողութեան թէ Սուլթանը խոստացեր էր խնայել իրենց կենաց, մերժեցին բանաւո-րութեան անսալ: Առաջնորդներէն երկու-քը յայնժամ ոտքի ելան և սենեկէն մեկ-նեցան իրենց դիտումը ի գործ դնելու, երրորդը մնաց, և կը թուէր մէտ ի հա-ւանութիւն, և վերջապէս խնդրեց որ նոր բանակցութիւն մ'ունենայ կէս զիշերին: Վրիպեցաւ այս ժամագրութիւնը յարգե-լէ, և հետեւեալ առտու ժամ 4½ին, (Յու-նիս 21), իմացանք թէ բոլոր յեղափոխա-կանք քաղաքէն մեկնած էին իրենց զէն-քերով: Այս լուրին վրայ՝ իշխանութիւնք արձակեցին Բրդերը փախ դնել յեղափո-խականաց ետեէն, և կը յուսացուէր թէ բոլոր խռովութեանց պատճառը վերցած լինելով՝ զրգուումը պիտի մարէր: Դժբաղ-դաբար զրոյց տարածուեցաւ Թրքաց մէջ

թէ յեղափոխականք ոչ թէ մեկնած էին քաղաքէն այլ թաքստոցներու մէջ պահ-ոււած: Ա'լ խալամ ժողովրդին գրգռու-ու մոլեռանդութիւնը հասաւ իւր գա-գաթնակէտը: Քաղաքին մէկ ծայրէն ցմիւսն ասպատակեցին, այրելով, կողոպ-տելով և վստահեցնելով իրենք զիրենք թէ ասպատամրները արդարեւ մեկնած էին քաղաքէն:»

Ասոր վրայ աւելցնենք «Արմենիայի» գրուած թղթակցութենէն, այն է հայ աղ-բիւրէ, հեռեւեալ տեղեկութիւնը.—

«Կրակը դադրեցնելու համար կառա-վարութիւնը նախ կը պահանջէ 13 յայտ-նի առաջնորդներու յանձնուիլը: Արմէնի-ական կազմակերպութեան պարագլուխ-ները և հնչակեան կուսակցութեան ներկա-յացուցիչը կը համակերպին յանձնուիլ, երկրիքը սարսափելի կոտորածէ ազատելու համար, նա մանաւանդ նկատելով որ եր-կար դիմադրելու ոյժ էլ չունին. բայց դաշնակցութեան ներկայացուցիչը իւր գը-լուխ պահպանելու համար նախամեծար կը համարէ բիւրաւոր մանուկների և աղ-ջիկների կոտորուիլը և առեւանգուիլը... Ասոր վրայ կառավարութիւնը աւելի խս-տանալով՝ անպայման անձնատուութիւն կը պահանջէ, բոլոր զինեալ Հայեր իրենց զէնքերով յանձնուիլը և ըստ իրենց յան-ցանաց պատժուիլը: Գործերի այս դու-թեան մէջ բոլոր հայ երիտասարդներ նա-խամեծար կը համարին խալառ կոտոր-ուիլ լեռների և դաշտերի մէջ քան թէ պատճառ լինիլ բոլոր ժողովրդի կոտոր-ուելուն, հետեւապէս իրենց զէնքեր հե-տերին առած, 1,000է աւելի երիտասարդ-ներ, Մ. Աւետիսեանի առաջնորդութեամբ, քաղաքէն դուրս կ'եկնեն: ... Բարթուղի-մէոս վանքի առաջ, Պաշգալէէն եկած և վանքը գտնուող զօրագնդեր դիմացնին կը բռնեն, յուսահատական կռիւը կը սկսի Յունիսի 26 ուրբաթ օր արշալոյսի՞ն, և այդ բաղմաշարշար, անքուն և ուժաուպառ հայ քաջերը իրենց քով գտնուած վերջին փամփուշտներն ալ սպառելով կ'իյնան ամ-բողջովին:»

Բ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՍ ԴԷՄ ԵՂԱՍԾ
ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անգլիական հիւպատոս Ուիլեամս և Ամերիկացի միսիոնարները կը պարսպեն

Վանի Հայ յեղափոխականներն, նախ վառն զի, սոքա չեն փութացած ի սկզբանէ մեղմագոյն պայմաններն ընդունելով չար-խափան լինիլ. և երկրորդ՝ զի փախած են Վանէն այն տանէ երբ իրենց ներկայ-ութիւնը կրնար չափով մը ծառայել քաղաքին պաշտպանութեանը:

Դէպքերն կը թուին իրաւունք տալ այս օտարաց: Միախոնարաց կարծիքը, — ոչ աղետալի հետեանքէն յետոյ կադմուած, այլ յառաջագոյն, փախստի նախորդ երեկոյին, մերայնոց բացատրուած կարծիքը — ա՛յն էր, թէ Հայոց և թուրք զօրաց միջև այդքան կռիւ ու կրակ լինելէն վերջ յեղափոխականաց փախուստը կրնար ծանրացնել ժողովրդին գալու աղէտը: Իրաւ է թէ թնդանօթներուն կրակին առջևէն ըստիպուած էին նոքա նահանջիւ իրենց ամբողջ գիրքերը, բայց կեանքի կորուստը երկուստեք ալ եղած էր, և աւելի թրքաց կողմէն, ու Հայ մարտիկները տակաւին յաղթուած չէին համարուէր, գեռ խուժանը կը վախէր իրենցմէ, և կառավարութիւնը ի հաշիւ կ'առնուէր իրենց ոյժը: Ուստի և կարելի էր բողոքատարար քիչ զոհողութեամբ ընդունիլ հաշտութեան նոր պայմաններն և չարխափան լինիլ կոտորածին: Սակայն երբ, այդ հանգամանաց մէջ, փախան յեղափոխականները գիշերով, խուժանին վրայ թողուցին այն սըպաւորութիւնը թէ արդէն ուժաստիւ և մթերատարութիւնը վրայ էին, ոչ և՛ շատ դէմ դնելու կարող: Ի լուր յեղափոխականաց փախստեանը՝ խաժամուածն ազատուած զգաց նոցա զսպողական ահէն և իւր վայրենի բնագոյններուն անտանձ ստպարէզ տուաւ: Միւս կողմանէ՝ թուրք իշխանութիւնը հաշտութեան պայմաններ յարգելու կամ օրինական ընթացքի մը հետեւելու պարտաւարութենէն ձեւապէս ազատ մնաց հիւսկատոտաց առջեւ, ուստի և հրամայեց Քրդաց փախ գնել «փախցած» յեղափոխականներուն ետեւէն, և թոյլ տուաւ խուժանին չարագործել սանձարձակ:

Խոտովանինք, սակայն, թէ այս դատողութիւնը և դատաւարամունք վերապահութեամբ ընդունուելու են, և գանք խնդրոյն աւելի հիմնական կէտերուն:

Ինչ էր Հայ յեղափոխականաց նպատակն ի Վան: Վստահ պատասխան մը չունինք. բայց կրնանք երկու ենթադրու-

թիւն անել. կամ յարձակողական էր նոցա միտում, կամ պահպանողական: Եթէ յարձակողական էր, կը յուսային օր մը Վանի զօրաց յաղթել և զքաղաքն դրաւել, և իրենց շահատակութեան ասպարէզն ընդարձակել դէպ ի մերձաւոր գաւառներ: Թէ յարձակողական միտում կար անդ, յայտնի է Րէնօլասի թղթէն որ կ'առէ թէ յեղափոխականները յայտարարութիւններ հաներ էին զժողովուրդը յապտամբութիւն գրգռելու: Այս մասին կարող ենք կատարելապէս համաձայնիլ Րէնօլասի և բացարձակ «յիմարութիւն» անուանել այդ անմիտներու արարքը: Որ Ա. մերիկայի մէջ, նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ, երիտասարդք ոմանք ուստ և չափազանցուած տեղեկութիւններէ խաբուելով՝ հաւատացած լինին թէ Հայ յեղափոխականները Վանի կողմը շատ ուժով էին, մեծ պատրաստութիւններ կատարած էին և պիտի զօրէին իրօք յեղափոխութիւն դուրս ել, յաղթել Քրդաց և թրքաց, այդ մինչև մէկ աստիճան հասկանալի է, բայց որ Վանի մէջ, բուն գործին մէջ գտնուողները, ինքնակոչ յեղափոխականներն իրենք իսկ իրենց ուժին վրայ ցնորքներ տաժած լինին, այդ, նորէն կ'ասենք, կը ցուցնէ իրենց կատարելալ յիմարութիւնը: Դոքա պէտք չունէին խոր մտքի և լայն հայեցողութեան, դոքա կրնային համբել իրենց հրացանները, իրենց փամփուռները, իրենց բաժանումները, և կրնային տեսնել իրենց թշնամեաց պէսպիսութիւնը, բազմութիւնը, զիրքը, ոյժը, թնդանօթները, պաշտօնական դիւրութիւնները: Միայն նայիլ պէտք էր, տեսնելու համար թէ յեղափոխութիւնը ինդրէ դուրս էր: Բայց դոքա, այդ թեթեւամիտները, ամենեւին արժանի չեն յեղափոխական կոչուելու, և իրենց գործքը և ընթացքը նորէն կ'ապացուցանէ թէ ցոյցի և արիւնհեղութեան սիրահարներ են՝ առանց ու է հոգածութեան և ցաւակցութեան առ խեղճ և անօթի, վշտահար և ջախջախուած աղ-գը:

Սակայն չմոռնանք և այն պարագայն, թէ Վանի մէջ երեք կուսակցութիւններ կային, իրենց առանձին՝ սետերով: Չենք կրնար վստահօրէն ասել, բայց ինչ ինչ պատճառներ կը միտեցնեն զմեզ կարծելու թէ խօլ յեղափոխականները Հնչակեանք եղած են և Դաշնակցականք, իսկ նահա-

տակեալն ՄԿՐՏԻՉ ԱԻԵՏԻՍԵԱՆ և իւրա-
յինք, յաւէտ պաշտպանողական դիտաւո-
րութեան կը ծառայէին, այսինքն զքա-
ղաքը պաշտպանել եթէ թրքաց կամ Բր-
գաց կողմէ կոտորածի փորձ փորձուէր:
Այդ բոլորովին տարբեր բան է: Առանց
գրգռիչ յայտարարութեանց, առանց անձ-
նամատն պոռոտախօսութեան, կարելի էր
պաշտպանողական պատրաստութիւններ
կատարել, և կառավարութեան հետ այն-
պիսի յարաբերութիւններ պահել որ սա-
կանոնաւոր դօրօք ջարդ քաջաւերել չհա-
մարձակէր, և չենք կարծեր թէ յամար-
ձակէր հրկապատասց ներկայութեանը, ե-
թէ ցնորամիտ յեղափոխականներ թունդ
չհանէին զիշխանութիւնը և չստիպէին
զայն ի ձեռնել իրենց խրախուսող ոյժը՝ և
բերել զայն ի վաղաժամ պայթիւն, յոչն-
չութիւն:

Վանի աղետալի փորձանքը կարեոր
խորհրդածութիւններ կը թելադրէ հայ
յեղափոխականութեան մասին ընդհանրա-
պէս, զորս կը վերապահենք մեր յաջորդ
թուոյ:

ՀԸՅ ՅԵՂԼՓՈՒՆԿՐՆՈՒԹԻՒՆ

Ի ՊԱՏ. ՃԱՐՃ ՍՐԵՅՆՈՂՏՍԷ,

ՄԻՍԻՈՆԱՐ Ի ՎԱՆ

(Այս յօդուած նիւ Եորքի Independent շա-
բաթաթերթին 04.13 թուոյն մէջ հրատարակ-
ուած է, և հայկական գետին վրայ ու հայ յեղա-
փոխականաց ծանօթացած օտարականի մը
տեսութիւնները կը պարզէ):

Իբր քսան տարի կայ որ այս երկրում
հայրենասիրական յուզման մասին լսուիլ
է սկսեր: Թէ Հայք իրաւացի ցաւեր ու-
նէին, այն անուրանալի է: Դատարա-
կութիւնը հարկաւ առնացի ողի կը մշա-
կէ և դժգոհութիւն կը ծնանի անիրաւու-
թեան և անարդարութեան դէմ: Բնական
և արդար էր որ Հայք այսպէս դատաւար-
ակուած՝ ի խնդիր լինէին զիրենք ճշող
իրաւադրկութիւններէն (disabilities) թե-
թեւացում մը գտնելու: Անոնք եւրոպա-
կան տէրութեանց, ինչպէս Պէռլինեան
Վեհաժողովում, ջանացին ներկայացնել

իրենց ցաւերը և նոցա բարեացակամու-
թիւնը գրուել: Ինձ կը թուի թէ պարս-
էր տէրութեանցն ազդու միջոցներ ձեռք
առած լինիլ արդարութիւն անելու նոցա:
Եւ սրովհետեւ չ'արին զայդ այլ ա'յն կերպ
նկատողութեան առին նոցա գանգատները
որ իսլամաց տիրող դատակարգերն աւելի
գրգռուեցան, սրով աւելի սաստկութիւն
քան ամոքում բերին Հայոց նեղութիւն-
ներուն, թերեւ տարօրինակ չէ որ սոցա
ինքնակոչ առաջնորդներն սկսէին մտաբե-
րել ի յեղափոխական միջոցներ: Յեղափո-
խական պետերու ամբիկեան որդիք հա-
զիւ թէ պատրաստ լինին դատաւարաւե-
լու յեղափոխութեան սկզբունքը: Եւ ոչ
անոնք՝ որք այս երկրի քրիստոնեայ ժողո-
վրդեան վիճակին ընտանի են՝ կրնան ծի-
տել թէ կային հարստահարութիւն և նա-
խատինք բաւական յարդարացնել զնեղ-
եալներն լծնկէց լինելու, եթէ կարող է-
ին: Սակայն ուրիշ տարր մ'ալ էական է
արդարացնելու այս տեսակ շարժում
մը, այսինքն յաջողութեան բանաւոր յոյս
մը: Ասիկա, Հայոց դէպքին մէջ, բոլոր-
ովին կը պակսէր, որպէս իրենց միսիօնար
բարեկամներն ու այլք հանապաղ մասնա-
նիչ կ'անէին իրենց: Պատճառները յիշել
հարկ չէ: Բայց հակառակ այս խրատուց և
ազդարարութեանց՝ սփռանքը(propaganda)
չարունակեցաւ, և այդ նկատմամբ ամեւ
նատխուր բաներէն մէկն էր բոլորական
անգիտացումը ամենայն բարոյական ող-
ջամիտ սկզբունց ի կողմանէ կազմակեր-
պիչներուն: «Նպատակը կը սրբազարծէ ըզ-
միջոցը,» կը թուի շարժմանս հիմնական
սկզբունց մէկը եղած լինիլ: Նոքա բացէ ի
բաց կը սովորեցնէին թէ ստութիւն, գո-
ղութիւն, սպանութիւն կատարելապէս ար-
դարանալի էին եթէ «Դատին» ծառայե-
լին, կամ օգտակար դատուէին առաջնոր-
դաց կողմանէ: Այսպիսի վարդապետու-
թիւններ, ժրութեամբ պատուաւորութեամբ
հասարակութեան, և նոյն իսկ նորաբուրիկ
պատանեկութեան, ազդեցին հանգոյն ժան-
տախտի, և երկարամեայ յաջող բարոյա-
ական և կրօնական կրթութիւն չ'պիտի օգ-
տէ ջնջելու այս մահաբոյր ազդեցութիւնը:

Երեք կամ չորս տարի առաջ սկսանք
լսել թէ ծրագիր ունէին զրգռել զԲր-
գերն ի խժդժութիւն ա'յնպիսի որ պիտի
ստեղծէին զԵրոստ և առաջնորդէր ի-
րենց յուսոց իրականացման: Զուր աշխա-

տանք էր հաւաստել զիրենք թէ ամենագոյն կասկած մը թէ իրենք յատուկ ճիգ կը թափէին յառաջ բերելու համար այդպիսի արդիւնք՝ յաւէտ պիտի ուծացնէր քան յանկուցանէր Եւրպիոյ համակրանքը: Զիարդ և իցէ, Թուրքը չսպասեց նոցա նախաձեռնութեան, այլ իսկապէս առանց գրգռուած լինելու, քսամենցուց զքաջաբակիր թաշխարհն Սասնոյ դիւային գաղանթ թիւններովը:

... Եւ ահա կուգայ բովանդակ արդի պատմութեան ամենատխուր գրուածը, ջարդերուն այն սարսափելի շարքը որ ըսկաւ անցեալ աշուն — և որ, աներկրայեմ, յանգեցաւ անցեալ կէս ամսուան դէպքերուն — որք այս կապույտ Ծովը (Վանայ) չառագունեցին արեամբ բլբլուց՝ դաւար հովիտներում և զայնս չըջապատող ձիւնապատ լեռանց վրայ կոտորելոց:

... Հաւաստեալ կը թուէր թէ այն ջարդերու ամիսներուն վկայութիւնը, միանգամայն տէրութեանց ընթացքն ու ետքաշուիլը՝ Թողուզ զԹուրքը գործել ըստ իւր անուշիկ կամակի, բաւական էր ցուցնելու չե՛ւ ևս համոզուած թիւսմիտներուն ալ, թէ յեղափոխական մեթոտներ և ցուցարարութիւններ պիտի անշուշտ ծառայէին աւելի ևս ծանրացնելու, փոխանակ թեթեւելու, Հայ ժողովրդի ուսերուն վերայ գրուած անտանելի բեռը: Սակայն հոս ի Վան, երեք տարբեր յեղափոխական կուսակցութիւններ, իւրաքանչիւր իւր արտասահմանեան պետերով, յարատեւեցին իրենց եղբնական սփռանքին մէջ: Մարդիկ՝ հագուած այնպիսի սարազով մը որ մասնաւորապէս գրգռիչ է Թրքաց, և ցատամուռն զինուած՝ զիշերները կը հսկէին փողոցներուն մէջ և յաճախ երևան կուգային Թուրք զիշերապաշներուն, որոց հետ անգամ մը ընդհարում մ'ալ ունեցան յարում Թուրք զինուոր մը սպաննուեցաւ: Յայտարարութիւններ հանեցին Սուլթանին նախատական՝ և զժողովուրդը յապատմութիւն գրգռող, և գրեթէ բոլոր այս թղթերն ինկան վալիին ձեռքը: Բռնի հանգանակութեան կանոնաւոր դրութիւն մը յառաջ տարին ի նպաստ «Հայրենասիրական» դրամագլխոց, յաճախ համեմելով զայնս սպանութեամբ և տուներ կոխելով: Նոքա սպաննեցին նշանաւոր եկեղեցական մը և քանի մը երեւելի մարդիկ, վասն զի սոքա բաւական հըռ-

թեամբ չծառայեցին. նոցա նպոռակին: Մեք Ամերիկացիքս ամեն գուն գործեցինք համոզելու այս արտասահմանեան պարոնները որ մեկնէին և չթողուն որ անհաւատարմական ցոյցեր այլ ևս տեղի ունենային: Խօսակցեցանք աւագ եկեղեցականաց հետ ալ, որ խօսք հասկցնէին օտարամտից հեռանալ, և որ ցապէն բնիկ ցոյցերը: Սակայն զուր տանջանք և անօգուտ վառտակ եղան այս ամենը: Տարօրինակ խելայեղութիւն մը կը տիրէր առաջնորդներուն և կը վարակէր հեռուողները, այնպէս որ փաստի և աղտաւնքի մտիկ անող չկար: Դիւրին է տեսնել թէ այնպիսի ընթացք մը ինչպիսի սաստիկութեամբ պիտի գրգռէր Խալամ առաջնորդները: Դրսի Գրգերը, որք շատ անգամ գաղպած էին այս յեղափոխականաց հետ երբ սոքա կ'երթեկէին սուկէ սահմանագլուխը, և որք իրենց ազդեցիկ մարդոց մէն ոչ սակաւ զոհ տուած էին նոցա գընդակներուն, ատելով կ'աւտէին յեղափոխականները: Եւ պէտք է խոստովանիլ ալ թէ Վանի մէջ կար կողմակերպուած յեղափոխական կուսակցութիւն, ոչ փոքր զօրութեան տէր, լաւ մը ճանչուած և բաւական յարգարարցնել զկառավարութիւնն որ ցայն սքընցնելու համար ազդու միջոցներու գործէր: Թէ դիւրին գործ մը չէր այդ, պէտք է խոստովանիլ: Այս առաջնորդներն երբէք միայնակ չէին, այլ սպառազինեալ օգնականներէ միշտ բոլորուած. նաև հասկցուած էր թէ նոքա չալաի վարանէին իրենց զէնքերը գործածելու եթէ զիրենք ձերբակալելու փորձ փորձուէր: Կ'երեւի թէ կառավարութիւնը իրօք կը վախնար այդ պետերու հետ սովորական, օրինական կերպով վարուելու: Միանգամայն կը զգար թէ ապստամբաց ներկայութեանը աչք գոցել այլ ևս ներելի չէր, թէպէտ մեր արդարութեան բոլոր զգացման նախատինք մ'է կառավարութեան թոյլ տալը որ իսլամ և գնչու խաժամուծն յարձակէր այն Հայերուն վերայ որոց տունները Թրքաց աներէն բոլորուած էին, և որք՝ հետեւապէս՝ երբէք թաքնուող ընծայած չէին յեղափոխականաց, և թողուլ որ ազատօրէն կողոպտէին ու սպաննէին, ինչ որ առաջին քայլն էր այս օրերու ահաւոր եղբերգութեան: Միջնակարգ Թրքերէն ոչ սակաւուց քով այս որսազուած Հայերէն ոմանք ապաս-

մանարան դասն, մինչ այլք փախան ին-
կան զուտ հայտարարի թաղերու սահման-
ներէն ներս, որոց վրայ ամփոսը չիշխեց
յարձակիլ: Այս սահմանին մէջ, յեղափո-
խականները ինքնապաշտպանութեան լաւ
պատրաստութիւն կատարած էին, ռազ-
մագիտական կետերու վրայ ամրացուցե-
ր էին ինչ ինչ սուներ, զորս քաջադէս սրե-
րոյ բազմութիւն մը կը պաշտպանէր: Սո-
քա դէմ դրին հասարակ թրքաց, Բրդաց և
Համիտիէ զօրաց, թերեւս նաև, մի քանի
անգեր, ոտախկանաց կամ կոնստանուպո-
լիսաց, և սպաննեցին շատ մը մահմետա-
կաններ, ի միջի որոց՝ թնդանօթածիգներու
հարիւրապետ մը և ուրիշ քանի մը սպա-
ներ: Այս դուրծը այսպէս երեք օր շարու-
նակած լինելէն յետոյ՝ Տիրար Ուիլեամս
(բրիտանական հիւսպատոս) կառավարու-
թեան հաւանութիւնն ստացաւ ընծայելու
դարմանալի աստիճան մեղմ պայմաններ
յեղափոխականաց, այսինքն, թէ իրենց ա-
ռաջնորդներէն տասը հոգի, հանդերձ
մաս մը զէնքով, անձնատուր լինէին նոյն
խոյն հիւսպատոսին, որ իւրային կառավա-
րութեան հետ պիտի երաշխաւորէր նոյա
անձնական ապահովութեան, միայն թէ
պիտի արտաքուսէին այս երկրէն: Եթէ նո-
քա ընդ փոյթ հաւանէին այս պայմանաց,
Տ. Ուիլեամս վստահ էր թէ կառավարու-
թեան կողմանէ ևս ընդունիլ պիտի տար:
Բայց նոքա յետաձգեցին և յամենայն մինչև
որ նոր զիպուածներ աւելի ևս զրգռեցին
խաւած ժողովուրդը, և պայմանները պէտք
է եղանակաւորէին: Սակայն և այն ատեն
փոյթ հաւանութիւն մը փրկած պիտի լի-
նէր զքաղաքը, բայց անդրադոյն յապա-
ղում մը, և նորադոյն պատահմանք,
մասնաւորապէս թուրք սպայից սպանու-
մը, հարկաւորեց երկրորդ եղանակա-
ւորութիւն մը, բայց և այնպէս այս ալ
ատկաւին կերաշխաւորէր անձնատուրնե-
րու կեանքը և քաղաքին ապահովութիւ-
նը: Այս մերժեցեցաւ ձեւապէս և հեգնու-
թեամբ, և այս քաջ պաշտպանողք իրենց
ազգին, որք այնքան երկար տանն ձեւա-
ցած էին իրեւն աղաւթարարք քաղաքիս,
յառօջ քան իրենցմէ ուէ մէկուն սպան-
նուիլը, խոյս տուին զիջերայն, իրենց հետ
պանելով բոլոր զէնքերը որոց համար ժո-
ղովուրդը բռնի հանգանակած էր, և հա-
մուշխով հարիւրաւոր պատանիներ և երի-
տասարդներ իրենց բաղդակցիլ, և թո-

ղաւ իրենց ընտանիքները իրենց ետև. և
այսպէս այս մեծապատիւները՝ ջանացին
փրկել իրենց պարանոցները, և թողուցին
որ քաղաքը աւերէր վասն մեղաց իւր-
եանց:

Այս յեղափոխական խմորը թափան-
ցած չէ բովանդակ ազգին, թէ և մեր բաղ-
ձացածէն շատ աւելի տարածուած է: Ինչ
որ սակայն ես կը փափաքիմ խնդրել
մարդկութեան բարեկամներէն իմ բնիկ
երկրին մէջ՝ է այս խոյն որ նոքա փտի-
ղենն ընդ մէջ այն խեղճ Հայոց որք այժմ
չարաչար կը առաւելին աստ և որոնցմէ
այնքան բազումք զոհած են արդէն իրենց
կեանքը՝ չուրանալու համար մեր ամենուն
հասարակաց Փրկիչը, և այն յեղափոխա-
կանաց՝ որք այնպէս անգթօրէն մատնե-
ցին զանոնք:

ՆԱԽԵԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Յուլիոս 27, 1896

Պատրիարք Սրբազանն՝ իւր հրաժա-
րականն տալու որոշումն ծանոց մեծ տէ-
րութեանց դեսպանատանց, ամենն ալ
առայած խոհմութիւն չէ պատասխանած
են, սակայն Ռուսիոյ դեսպանատան առա-
ջին թարգմանն անձամբ Պատրիարք Սըր-
բազանին գաղով ծանուցած է թէ, Հայոց
շահն իւր դահի վրայ մնայն կը պահանջէ,
թէ Պետրոպոլիի դահլիճն այդ խորհուր-
դըն կուտայ: Սովաւ ոյժ առաւ Պատրի-
արք Հայրն և յետաձգեց իւր որոշում:

Բաղաքական և Կրօնական Ժողովոց
անդամք Յուլիոս 21ին Նազըմի բնակարա-
նըն ի տեսութեան երթալուն, Նազըմ
ծանուցած է թէ, Սուլթանն այդ երկու
Ժողովներն պատճառ կը ճանչնայ բոլոր ա-
րիւնհեղութեանց ու չարեաց, թէ մինչև
ցարդ եղածներուն կը ներէ, սակայն յա-
ռաջիկայ գալիքներուն համար վարչու-
թեան երկու Ժողովներն և այդ ժողովոց
իւրաքանչիւր անդամներն առանձնաբար
պատասխանատու կը ճանչնայ ևն: Նոյն օ-
րըն Պատրիարքարան դառնալով խառն
նիստ կը գումարուի, բանակցութիւնք
եզրակացութեան մը չեն հանգիր: 25ի

(ուրբաթ) կրկին ի նիստ գումարուելով, կ'որոշեն տեղեկագրել Պատրիարք Հօր իրենց նազըմի հետ ունեցած տեսակցութեան նկարագիրն և յաւելուլ թէ, իրենց ներկայ վիճակին մէջ չեն կարող չարունակել պաշտօնին ևն: Նոյն օրն այդ թուղթըն կուտան Պատրիարք Սրբազանին, որ այս թղթի վրայ յենլով խիստ թագրիր մը կը գրէ Դրան և որ երեկուան նախարարաց ժողովոյն բանակցութեան նիւթ եղած է:

Շահնազար ձերբակալուեցաւ Յուլիս 23ին և իւր թերթն խափանուեցաւ, չարժառիթն է սորա նանսիի ուսանող օրիորդներէ միոյն գրած նամակն որ այդ օրիորդի աստ վերագարձին բռնուեցաւ: Նամակն կը նկարագրէ Սեպտ 30ի կոտորածն:

Վերջին ջարդի վայրն Ակն չէ, այլ Էփրիլ, Տիգրանակերտի մօտ գիւղաքաղաք մը:

Կողոպտեալ ժողովրդեան իբր հաց տրուածէն նմոյշ մը տեսայ որ աւելի կաւի կը նմանի քան հացի. այդ տարօրինակ սնունդէն մաս մը ղրկուած է Ս. Պապին:

* *

Կ. Պոլիս, Օգ. 7, 1896

Վերջապէս Սուլթանն՝ շնորհիւ Նուրեանի և իւր աջակցաց անձանձիր աշխատութեանց՝ յաղթահարեց, յաջողեցաւ և զրիկել Հայն իւր վրայ հսկող, իւր դասն պաշտպանող և իւր աղէտներն աշխարհի ծանուցանելով՝ յաւոց դեղ ու դարման որոնող անձնուրաց հովուէն. այս՝ մեր երկաթէ Պատրիարքն՝ թշուառ Հայոցս վերջին ապաւէնն՝ Իլմիրլեան Սրբազան, հարկադրեցաւ հրաժարիլ: Սուլթանն աւելի դիւրութեամբ ջարդել տուաւ հարիւր հազար Հայեր՝ քան հրաժարցնել մի ազգասէր Հայ պատրիարք՝ որոյ այնչափ փարած էր իւր ժողովուրդը:

Նուրեան արդէն ամիսներ առաջ խոստացած էր Դրան՝ ըստ Սուլթանի փափաքանց՝ Իզմիրլեան Սրբազանի հրաժարականըն ձեռք բերել: Գիտէք թէ Նուրեան իւր խոստումն յարգելու համար ուէջ ջանք չխնայեց, իւր բազմաթիւ ծրագրաց անյաջողութիւնն չյուսահատեցին զայն, սակայն Սուլթանի համբերութիւնը հատած

էր և կատաղած մահաւանդ Պատրիարք Հօր վերջին խիստ թագրիրին վրայ՝ զոր ծանուցի ձեզ նախորդ թղթովս՝ ուստի և կը պահանջէր անմիջապէս Հայոց Պատրիարքի հրաժարականն: Հարկ էր առայս խիստ միջոցներու դիմել. Նուրեան դոցա գործադրութիւնն ալ ստանձնեց: Օգ. 1ին առ Իզմիրլեան Սրբազան ուղղեալ մի ուղերձ խմբագրեց, յորում աղուխաբար, կը դրուատէր Պատրիարք Սրբազանըն, նորա ազգասիրութիւնն ու կորովի գործունէութիւնն, սակայն կը յաւելուր՝ ի շահ ազգին հարկ էր որ հրաժարականն մատուցանելու զոհողութիւնն ընէ ևն, ստորագրեց և յաջողեցաւ ստորագրել տալ զայդ թուղթ կառավարական հայազգի մեծ պաշտօնէից ոմանց, որպէս՝ Նորատուենկան Գաբրիէլ, Մամիկոնեան Միքայէլ, Սէֆէրեան Նշան, Սերվիչէն, Սեպուհ Պէյ, Մագսուտ, Աբրահամ Փաշայ, Գարակէօղ Գրիգոր, Գոլլ Աւետիս, Իլիաս Էֆ. և կարծեմ այլ մի քանիներու: Ստորագրութիւնք չաւ դժուարաւ կը տրուէին: Զգոհացաւ սովաւ և «Ժողովուրդ Հայոց» ստորագրութեամբ յայտագիր մը խմբագրեց և հրատարակել ուցրուել տուաւ, որով Պատրիարք Հօր ընթացքն կը քննադատէր և զայն կուսակցականաց պարալլուիս և ամեն չարեաց պատճառ կը համարէր: Այս թուղթ տեսնուեցաւ Օգ. 3ին:

Սրբազան պատրիարքն՝ որ դեռ իւր թագրիրի պատասխանին կ'սպասէր՝ տեսնելով իրաց ընթացքն, իւր կանխաւ պատրաստած պատճառաբանեալ խիստ և ընդարձակ հրաժարականն ևս առաւել ըստուարացուց և խոտացուց, և Օգ. 3ի երեկոյեան Բ. Դրան յիցեց: Սուլթանն տեղեկանալով մեր երկաթէ պատրիարքի խիստ և արդար բողոքներուն յանչափս սրամտեցաւ, սակայն միւս կողմանէ ի տես հրաժարականին զոհութիւն զգաց, և հրաման ըրաւ ըստ կանխաւ եղած կարգադրութեան՝ իրեն հաւատարիմ կրօնական և աշխարհական մի քանի անձերու յանձնել ազգային գործերն: Դուռն և դատական ու կրօնական գործոց նախարարութիւնն անմիջապէս գործի ձեռնարկեց: Օգ. 5ին առաւօտեան թուրք թերթերն ծանուցին Հայոց պատրիարքի հրաժարումն, որոյ հետեւեցան նոյն օրուան և այլ թերթերն, առանց ուէջ մանրամասնութեան: Յփջորդ

օրն առաւօտուն միայն իզմիրլեան Սրբազան ընդունեց իւր հրաժարականի ընդունելութիւնն ծանուցանող թուղթն, յորում կ'ըսուէր նաև թէ՝ վարչական ժողովք լուծեալ են իրենց ժամանակի աւարտման առթիւ:

Օգոստոսի 4ին արդէն դատական և կրօնական գործոց նախարարութիւնն յատուկ պաշտօնագրերով հրաւիրած էր 8 կրօնական և ութ աշխարհական հայեր գտնուիլ յաջորդ օրն ժամ 8ին ի պատրիարքարան Հայոց: Հրաւիրեալք էին եկեղեցական դասէն— 1 Բարդուղիմէոս եպօ. Չամչեան (Պրուսայի հանրաժամութեան վաղեմի առաջնորդն՝ որ իւր թեմէն վճռուեալ էին ի վեր կառավարութենէն 2,000 ղուրուշի ամսական մը կ'ընդունէր ի վարձատրութիւն իւր հաւատարմութեան), 2 Մեսրոպ եպօ. Սուքիանեան (վատահամբաւ նախկին առաջնորդ Ա. Պոլսոյ որ դժբաղդաբար գոհ չըզնաց ազգասիրաց կապարէն և որ քանի մ'ամիսէ ի վեր աստ կառավարական թոշակ և վարձատրութիւն կը վայելէ), 3 Մելքիսեդեկ եպօ. Մուրադեան (ինքնակոչ կաթողիկոս, որ Զմիւռնիայէն վճռուեալ էին ի վեր թրքամոլ քաղաքականութիւն մը բռնած է), 4 Յովհ. քահանայ Մկրեան (աջակից Նուրեանի), 5 Մանուկ եպօ. (քարոզիչ Օրթոդոքսի), 6 Գարրիէլ վարդապետ Ճէվահիրճեան (Պատրիարքական փոխանորդ), 7 Գևորգ վարդապետ Երեցեսն (Երուսաղեմայ պատրիարքական փոխանորդ ի Կ. Պոլիս), Տէր Գարրիէլ քահանայ Խանճեան Իւսկիւտարի:

Աշխարհականաց դասէն— 1 Արրահամ Փաշայ (ծանօթ իւր աշխարհաքաղաքացի վարքով և ազգային անտարբերութեամբ, որ Սուլթանի հրամանաւ ամիսներ առաջ այնքան աշխատեցաւ պատրիարքական հրաժարականն ձեռք անցնել, այլ ի զուր, Նուրեանի վերապահեալ էր այդ փառք), 2 Սեպուհ պէյ Մադուտ (եղբայր վատն Սիմօն պէյի որ տարիներով ազգիւ տուներ քանդեց իւր վարչապետ և վերջապէս արժանապէս պատժուեցաւ ազգասիրի մը դնդակաւ և սուլի յարժանապէս յԱստուծոյ), 3 Նուրեան էֆ. (գոր հարկ չէ չէ ներկայացնել), 4 Գրիգոր Գարակէօզեան (որ իւր մի եղբոր ազգին ըրած կըտակը մարսած է արդէն և այժմ ջանաց միւս եղբոր՝ Տիգրանի՝ հարիւր հազար ոսկւոյ կտակն ալ իւրացնել), Իլիսս էֆ.

Չայեան, 6 Կարապետ Գափամաճեան, 7 Պատրիկ Կիւլպէնկ, 8 Տիգրան էֆ. Մանուկեան:

Սուլթան-ընտիր անդամք այս նորակազմ գերագոյն ժողովոյն՝ ժամ 8ին գըտնուեցան ի պատրիարքարան ի բաց առեալ Աբրահամ փաշայէն և Մելքիսեդեկ եպիսկոպոսէն, որոց հրաւիրագրեր ժամանակին ձեռքերին հասած չէր: Դատական նախարարութեան կրօնական գործոց տեսուչ Զիվէր Պէյ, պատրիարքարան հասնելով՝ կարգաց Մեծ եպարքոսի մի հրամագիրն՝ որ կը ծանուցանէր ըստ կայս. հրամանի իզմիրլեան Սրբազանի հրաժարականի ընդունելութիւնն և վարչական ժողովոց պաշտօնավարութեանց ժամանակամիջոցի լրացմամբ պաշտօնէ դադարումն: Եւ կը ծանուցանէր ներկայ հրաւիրելոց թէ պաշտօն ունին պատրիարքական տեղապահի ընտրութիւնն հատարել, արդիւնքն տեղեկագրել, և ազգին գործերը վարել մինչ ցկալմութիւն կրօնական և քաղաքական ժողովոց: Զիվէր Պէյ մեկնելէն վերջ փոքր ինչ խորհրդածութիւններ ընելէ յետոյ ցրուեցան, չարաթ օր ժամ 3ուկէսին Ղալաթիոյ խորհրդարանը հաւաքուելու պայմանաւ:

Ինչպէս կը տեսնուի այս գերագոյն ժողովն պիտի կարգադրէ միայն տեղապահի ընտրութիւն և վարէ վարչութեան դեր մինչ սոցա կազմութիւն. յայտնի չէ դեռ թէ ինչպէս և ե՞րբ պիտի կազմուին վարչական ժողովներն: Ըստ օրինի ընդհանուր ժողովն միայն իրաւասութիւն ունի վարչական ժողովներու կազմութեան. կը կարծուի թէ՝ այս Սուլթան-ընտիր գերագոյն ժողովն պիտի կատարէ նաև ընդհանուր ժողովոյ դերն, և այն օրէն Ազգ. Սահմանադրութեան մեծ հարուած մը տրուած պիտի ըլլայ:

Ժողովուրդն շատ յուզուած է, յուսահատական ցոյցէ մը կը վախցուի:

Կառկածներ կան թէ իզմիրլեան Սրբազան աքոթր պիտի զրկուի Երուսաղէմ:

Կրեոէի եւրոպական կառավարութեանց ոմանց կողմանէ պաշարումն և ցամաք ելնել տեղւոյ հրապարակի վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ, արժեթուղթերն ինկան. սակայն յետոյ լսուելով այդ կառավարութեանց աւելի հաշտարար դերն, հրապարակն փոքր ինչ շտկուեցաւ:

Կառավարութեան գանձը բոլորովին

դատարկացած է: 6 ամիսներէ ի վեր ամասկան տրուած չէր պաշտօնէից: Վերջերս, Յուլիս 30ին, դժգոհութեան յայտագրեր փակցուած տեղնուեցան առ այս, մի քանի օր վերջը մէկ մէկ ամասկան վճարուեցաւ:

* *

Կ. Պոլիս, Օգ. 10, 1896

Շարաթ օրն ժամ Յուկիսուն (Բ. Թ.) ժողովականք ներկայ էին ի խորհրդարան Ղալաթիոյ, իրայ առեալ Մեղքիսեդեկ եպ. է որ տկարութիւն առարկելով չէր եկած և Պատրիկ Էֆ. Կիւլէնկէ որ նախորդ օրն Եւրոպա մեկնած էր:

Նուրեան՝ իւր դեկտատորական դերն նուիրադործելու համար՝ կամի ասենսւթեւ ընտրուիլ. իւր դէմ կ'ունենայ մեր երկու արժանաւոր եկեղեցականներն, այսինքն, Մանկունի եպ. և Նրէցեան վարդապետ: Արրահամ փաշայ ասենսպետ և Իլիաս Էֆ. ասենսպետ կ'ընտրուին:

Ժողովոյ անդամոց կանխաւ փոխանակած կարծիքներէն կը հետեւէր թէ՛ Գրիգոր Արքեպիսկոպոս Օհանէսեան պիտի ունենար քուէից բացարձակ առաւելութիւն: Նուրեան զայս տեսնելով իրար անցաւ, աշխարհականաց ականջին փոփոաց, կրօնականներն չոյեց և այս ամենուն ոյժ տալու համար ըսաւ, «Եպարքոսի հրամանըն է Բարթողիմէոսի ընտրութիւն, այդ միջոցաւ շատ չահեր կրնամք ունենալ ևն:» Այս ճնշման միջոցներուն նկատմամբ բոլորքոյն եղան, սակայն Նուրեան իւր ազդեցութիւն ըրած էր: Բուհարկութիւնն տեղի ունեցաւ և Բարթողիմէոս եպ. 8, Գրիգոր Արքեպ. 5 և Մեսրոպ եպ. 1 քուէ չահեցան. ուստի Բարթողիմէոս ընտրուեցաւ տեղապահ, ըստ փափաքանոց Նուրեանի և Սուլթանի:

ԾՈՎ

ՌՈՒՍԻՈՑ ԿԱՑՔԸ ՓՈԽՈՒՄԵ Է

Հետևալը կը գրեն Պէդլիկէժ առ Տէլլի Նիւզ, Յուլիս 26ին:

Ամենակարեւոր լուր մը կուգայ, Ս. Բէդէրպուրկէն, որ, եթէ ուղիղ է, Արեւելեան խնդրոյն վճռական դարձուած մը

պիտի տայ հաւանականօրէն: Շարաթ մը առաջ ուշադրութիւն հրաւիրեցի Ռուսական Մամլոյն փոխուած լեզուին վրայ՝ նշկատմամբ Պալքանեան դէպքերուն: Ասի նաեւ թէ կը ֆետր տեսնել թէ արդեօք գործածուած նոր լեզուն նախանշան մ'էր Ռուսոյ կացքին մէջ փոփոխութեան մը հանդէպ Թուրքոյ: Իրաւ ալ հիմա կ'ասեն թէ ռուս լրագրիւններու այդ խիստ եղանակը վերաբերութեամբ Բ. Դրան՝ յառաջ եկած է մոսկովեան դահլճին ուղղակի թեւադրութենէն, և Petersburgskaja Viedomostei յօդուածը, որմէ կոչում կանէի անցեալ օր, հիմնուած էր այն նիւթերուն վրայ, զորս նորա խմբագիրը, Իլիան Ուշթօմսքի, ստացած էր նոյն ինքն Ձարէն, որոյ վստահութիւնը կը վայելէ:

«Frankfurter Zeitung»-ը իւր Բեդերպուրկեան թղթակցէն կ'իմանայ հետեւեալը:— Վերջերս Ձարը աներկրայելի վստահութեան աղբիւրէ մը ստացեր է առատ նիւթ նկատմամբ խժդժութեանցն զորս Թրքերը գործեր են ի Քանիա և Օսմանեան պետութեան ուրիշ կողմերը: Այս տեղեկագրութեանց ընթերցումը յոյժ խորին տպաւորութիւն մը գործեր է անոր վրայ, ուստի և իսկոյն կանչել տալով Իլիան Լօպանօֆ՝ հրաման տուեր է որ անմիջական և ուժգին ներկայացումներ անէ Դրան յանուն նորին վեհափառութեան: Կայսրը իւր նախարարին ստած կը լինի— «Թուրքիա կարծես մեզ խաբել կ'ուզէ: Բոյց միտք չունիմ և չեմ կրնար թողուլ որ դադանութիւնը շարունակուին մինչեւ որ գուցէ Սուլթանին Քրիստոնեայ հպատակներուն ամենն ալ մարթութիւն: Ասոր վախճան տրուելու է: Թուրքիա խոստանալ շատ է խոստացեր, այժմ ժամ է զայնըս ի գործ դնել:»

Երբ Լօպանօֆ մեկնեցաւ, Ձարն զիլիան Uchtomskին կանչել տուաւ, ցցուց նմա բոլոր վաւերաթղթերն, և հրամայեց գործածել զայնս լրագրին մէջ, և դատապարտել պատմուած արարքները:

Դեռ ուրիշ նշան մ'ալ կայ որ կը թուի ցուցնել թէ վերի զրոյցը ճշմարիտ է. ասեւ կ'ուզեմ Գերման մամլոյն փոխուած եղանակը, կէս-պաշտօնական թերթերն ալ ի միջի: Կ'երեւի թէ Գերմանական դահլիճը իրազեկ էր ի ժամու թէ հովը որպէս կը փչէր ի Ս. Բեդերպուրկի: Ինչպէս կրկին ու կրկին մատնանիչ արած եմ,

Գերմանիոյ Պալքանեան քաղաքականութիւնն է պարկեշտ միջնորդի դերը կատարել այլապէս պետութեանց և նոցա հակընդդէմ շահերուն մէջտեղ: Յորքան Ռուսիա, ամենէն աւելի շահ ունեցողութիւնը, հանդարտօրէն թոյլ տուաւ թրքաց գազանանալ և խուլ մնաց Անգլիոյ կողմանէ արձակուած զայրացման աղաղակներուն, Գերմանիա քան զԶարն իսկ աւելի ռուս լինելու պատճառ մը չաւտաւ: Բայց երբ յայտնի եղաւ թէ Ռուսիա սկսեալ է զգալ իւր պարտաւորութիւնը իբրեւ առաջին քրիստոնեայ պետութիւն ի հարաւարեւելս Եւրոպիոյ, ուր իւր կրօնակիցք նշաւակ են դժնգուի նեղութեանց, Գերմանիա կարող է թուրքիոյ հանդէպ ուրիշ լեզու մը գործածել, լեզու մը համաձայն անգլիականին և ռուսականին, Արեւելեան խնդրոյ երկու բեւեռներուն:

Ռուս քաղաքականութեան այս դարձուածին շնորհիւ՝ դէպքերն ի թուրքիա այլ իմն կերպարան կ'առնուն: Եթէ Դուռն հիմա լրջօրէն չձեռնարկէ խոտաղեալ բարենորոգումներն իրականացնելու, Արեւելեան խնդիրն պիտի բացուի իւր բովանդակ ծանրութեամբ: Յայնժամ եւրոպական դիւանագիտութիւնը պիտի ցուցնէ թէ կը բաւէ՞ իւր դժուարին գործին: Կարողութեան պէտք չկայ հանդարտ հանդիսատես լինելու համար երբ մարդկային բիւրք բիւրիւց կը նախատուն և կը ջարդուն: Բայց հիմա դիւանագիտութեան պիտի լինի՝ կարծեմք՝ բաւական գործ, և կը մնայ տեսնել թէ արդեօք քաղաքակրթութեան հասարակաց գաղափարը պիտի յաղթէ՞ պղտիկ նախանձոտութեանց:»

ՀՐԷԻՑ ԶԱՐԱԳՈՐԾ ԴԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ ՄԷՋ

(ՄՇԱԿԻՆ ՎԻԵՆՆԱՅԷՆ ուղղեալ նամակէ մը կ'առնուծք հետեւեալ մասը.)

Գերմանական լրագիրները կարելի է բաժնել երկու մասի. ազատական և պահպանողական-կառավարական: Առաջնոց գլխաւորներն են «Քէօլնիշէ Ցայտունգ» և «Բէրլինէր Տագէթըլաւ»: Սոքա ազատական են միայն անուամբ, ճիշդ ինչպէս

հոս՝ Աւստրիա, նոյնանուն կուսակցութիւնը, որ միայն հրէաների շահերն ունի ի սրտի: Այդ երկու լրագրերը, ինչպէս և բոլոր գերմանական լրագրաց մեծագոյն մասը, հրէից ձեռքն է: Իսկ հրէայք սխերիմ թշնամութիւն մը ցոյց առին հայերի այս խնդրոյն առթիւ: «Բէրլինէր Տագէթըլաւ» չէր կարող արդէն այլապէս գործել: Դա աւելի տաճկաց դեսպանատան օրգանն է, քան գերմանական ազատական կուսակցութեան: Ի սկզբանէ անտի «Տագէթըլաւ» ուրացաւ հայոց ջարդերը՝ ծաղրեց անգլիացիները, որոց ազատականութիւնը միշտ օրինակ կը բերէ սակայն, և ներկայացուց հայերին իբրեւ անկախութիւն երազող ապստամբներ: Որ հրէայ մը մինչև իսկ Դլադաստի անշահախնդիր մարդասիրութեանը չհաւատայ, դա մի յոյժ բնական և հասկանալի բան է: Նա իր մտածման և զգացման նժարով կը չափէ ուրիշներուն ալ արարքը, և այդու իր չափըն ալ կուտայ: «Կէօլնիշէ Ցայտունգը» բաւական ատեն մեզ նպաստաւոր գրեց, հըրատարակեց խմբագրականներ՝ զորս հայ մը ինքն կամ «Դէյլի Նիւզ» աւելի ջերմ, արդար ու ճշմարիտ չէին կրնար յօրինել — դա մի մեքենայութիւն էր, տաճկին իր աջակցութիւնը աւելի թանկագին վաճառեւ լու համար, — այժմ նոյն լրագիրը լի է հայհոյանքներով հայերին, ինչպէս և ճշմարտութեան դէմ: Սուլթանը բարեխնամ, իր բոլոր հպատակաց անդորրութիւնը և բարեւակցութիւնը կ'ամեցող լուսաւորեալ և ազատամիտ ինքնակալ մ'է, որուն վեհանձնութեան և ներողամտութեան Հոյք դողութեամբ, աւարառութեամբ և մարդասպանութեամբ կը պատասխանեն — կըսէ «Կէօլնիշէ»:

Ընդհանրապէս բոլոր հրէայ լրագրութիւնը ի Գերմանիա նոյն լեզուն կը գործածեն հայերին դէմ և լի են Սուլթանին գովասանքներով, որ, հայոց անվստահելիութիւնը տեսնելով, իր հայ պաշտօնեաները կ'արձակէ և դոցա փոխան — հրէաներ կ'առնու: Համայն Եւրոպայի հրէայ լրագրութիւնը, գրեթէ առանց բացառութեան՝ ըսելէ Եւրոպայի մամուլին մեծամասնութիւնը՝ միտմայն Հայոց դատը փոխեցին մի ապստամբութեան, և զհայերն կ'ստիպան, աւագակ, լեռնային ժողովուրդ մ'ըրին: Հրէայ մամուլին հայերուն տուած վնասը անհուն, անհաշուելի է: Ժո-

դավրդեան, մինչև անգամ լուսաւորեալ և արեւելեան գործոց տեղեակ մարդոց կարծիքը Հայերի վրայ՝ տակաւին այժմ այն է թէ Հայերն ապստամբներ են, որոց խեղճ Սուլթանը ի գուր Հանդարտեցնել կը ջանայ ամեն բարի միջոցներով:

Այս ձմեռ տեսակցութիւն ունեցանք Վիէնայի արեւելեան Համալսարանի տէրտնօրէնի հետ (այժմ ընդհանուր հիւսկատոս Աթէնքում,) որ Տաճկաստան ճամբորդած, լեզու գիտցող ծանօթ մի անձնաւորութիւն է, և կարող իր կարծիքը տեղւոյս հրէայ մամուլին ազդեցութեան անկախ ու բարձր պահել: «Լաւ ուրեմն, ըսաւ, տաճկին միայն յանցանքը՝ տկարութեան մոտեցող ներողամտութիւնը և բարութիւնն է. պէտք է գինու գորութեամբ նուաճել, ընկճել, արմատախիլ ընել ապստամբութիւնը:— Պատասխանեցի, որ ապստամբութիւն չկար, հապա ջարդ մը. յիշեցի Հայ սպանեալ, տանջեալները ի Սաւուն, Էրզրում, Տիարպէքի ևն.— «Դոքա անգլիական լրագրաց սուտերն են» ըսաւ: Անկարելի էր իր համոզումը փոխել. և ուստի՞ քաղած էր զայն— «Նայէ-Փրայէ Պրէսէէն», «Տագէրլատէն», և այլն. Վիէնայի հրէութեան օրգանները...»

ԽԱՅՏԱՌԱԿ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

THE NEW YORK HERALD

Մեր նախորդ թուով կը ծանուցանէինք թէ Նիւ Եորքի Հէրալտ թերթը ինչպէս սկսած էր քիչ գորովալից չէշտերով թօսիլ Թրքաց գործերուն վրայ, և թէ լեզուի այդ փոփոխութիւնը կը ծագէր այն խոստովանեալ պարագայէն որ Սուլթանը, վերջին անգամ կաշառք բաշխելու ատեն Եւրոպիոյ մեծ թերթերուն, չէր յիշած նաև զբազմերախտն Հէրալտ, «not including The New York Herald» որպէս ինքն ամուրերես Հէրալտն իւրային իսկ բերնովն կ'ասէր: Այդ օր Հէրալտ երկու տեսակ հեռագիր կը հրատարակէր, որոց մին կը ներկայացնէր Կրէտէի աղմուկը իբրեւ խաղուելու վրայ, իսկ մյուսը՝ իբրեւ հեռի հանդարտելէ, և խմբագրականաւ մը կը բացատրէր իւր դիւրախաբ ընթերցողացը թէ առաջինը ներշնչուած էր Դոնէն, մինչ երկրորդը ուղղակի կուգար Հէրալտի ա-

նաչառ թղթակցէն, որ դէպքերուն ծանրութիւնը աշխարհի կը յայտնէր:

Հէրալտի այդ խմբագրականը անսպասարուակեալ սպառնալիք մ'էր Դրան, և սպառնալիքը ուստով ունեցաւ իւր արդիւնքը: Պալատը վախցաւ, և... այժմ Հէրալտ նորէն դարձած է իւր փոխածին, այսինքն թրքական գաղտնութիւններն ըստ կարելոյն պատրուակելու և քրիստոնեայ հարստահարելոց ընթացքը պախառակելու պժգալի դերին:

Այն միջոցին երբ Հէրալտ դադրած էր զԴոնէն փայփայելէ, Եւրոպական, մասնաւորապէս Փրանսական, մի քանի թերթեր տլ, որք մինչև ցայնվայր թրքա-սիրական դիրք բռնած էին, սկսան յանկարծ թեր ելնել տկարին և ջախջախուածին: Արդեօք դոցա՞ւլ բոլոր մարդասիրական ջերմ ժայթքումներն ուրիշ բան չէին բայց եթէ գող ագռաւներու կանչ ու կառանչ՝ ի նշան դժգոհութեան թէ նոր կրծօններ չէին եկած իրենց խոշորակուլ որկորները լեցունելու:

Պապնժի՞ք, ստայօք, ստաբուխ բերաններ:

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԱՅԻՈՏ ԻՐԱԽՈՒՆԲԸ

Միացեալ Նահանգք նորէն ստիպուած է ի հաշիւ կոչել զԹուրքիա՝ Ամերիկեան քաղաքացիներու հետ իւր վարմունքին համար: Ամերիկացի եղած ինը հայազգիներ ընդ ձեռքաւարութեամբ են ի Թուրքիա, որոց դատաւարանը, ըստ դաշնագրական իրաւանց, պէտք է տեսնուէր Ամերիկայի ներկայացուցիչներուն ձեռքով, եւ եթէ յանցաւոր գտնուէին, երկրէն դուրս հանուէին, բայց ոչ երբէք Թրքաց բանտերուն մէջ նետուէին: Ասկէ զատ, այդ ամերիկացի Հայոց ընտանեաց գաղթման խնդիրը կայ, որ Միացեալ Նահանգաց կառավարութեան ուղղորութիւնը կը ըզբաղեցնէ:

Դոնէն կը բաջաղէ թէ ի ծնէ թուրքիացի անձանց յետոյ ուրիշ երկրի քաղաքացիութեան ընդունուիլը անվաւեր կը նկատէ: Ամերիկա կը մերժէ Թուրքիոյ այդ յաւակնութիւնը, և Ուօշինկթընի Դաշլիճը կը պնդէ, թէ այն Օսմանեան հպատակներն, որք կամաւ թողլով իրենց

բնիկ երկիրը՝ ըստ օրինի քաղաքացի կը դառնան այս երկրին, քաղաքացիութեան լիաւ իրաւամբ զգեցեալ կը լինին, և Ամերիկայի կառավարութենէն պաշտպանուելու տիպոս ունին ի թուրքիա ընդդէմ այն տմեն պաշանջներուն, զորս Դուռն կրնայ հանել անոնց օտարացումէն վերջը:

Ամերիկայի եղած և այժմ հոս բնակող Հայազգիներու կողմէն գանգատ կը լինի թէ թուրք կառավարութիւնը թող չի տար որ կրննց ընտանիքը դադրեն յԱմերիկա. ուստի Ուոշինկթընէն հրահանգ տրուած է մինիսթր թըրէլի՝ անել պարտաւարաշաճ ներկայացումը Դուրան և պնդել որ թող տայ այդ ընտանիքներուն գալ յԱմերիկա իրենց էրիկներուն կամ հայերուն քով:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Կ Պոլիս, Յուլիս 28— Համիտիյէ հեծելազօրաց վաշտ մը, 500 հոգիէ բաղկացեալ, հասած է Սէլամիէի զօրանոցները, Սկիւտարի մէջ, մարդանք առնուլու համար, յետ որոյ պիտի փոխադրուի գաւառները և ուրիշ վաշտեր պիտի բերուին կարգաւ, մինչև որ բոլոր Համիտիյէ զօրքը զինուորական մարդանք ընդունած լինի:

Լոնտոն Օգ. 5— Տիկին մը, որոյ անունը տրուած չէ, և որ նոր վերադարձեր է Հայաստանէն, կը պնդէ թէ օտար հիւպատոսներն ու միսիօնարք հոն մէկ միլիոն կը հաշուեն այդ երկրին մէջ պատահած մահերու թիւն իբր արդիւնք կոտորածոց և սովի:

Լոնտոն, Օգ. 17.— Իւր վաղուան թըուոյն մէջ DAILY NEWS պիտի տուէ թէ դիւանադատական աւելի թղթակցութիւն ընդ հուպ իւրոյ պիտի հնէ, որ պիտի ցուցնէ թէ Հայոց դէմ դործուած խեղճութիւնք իրենց ծագումն ունէին Երւաղի Քէօզլում, Սուլթանի բնակարանում, և թէ անոնք Նորին Վեհափառութեան հաւանութեան արժանացած էին այն նպատակաւ որ թրքաց բարեկարգութիւնը կուսակցութիւնը իրաւունքը Հայոց

օրինակէն, թէ ինչ բանի կրնար սպասել ինքն ալ, եթէ իւր անդամները չարունակէին իրենց սիրտները (propaganda):

Այս լրագիրը կը յայտարարէ նաեւ թէ թղթակցութիւնները ցոյց պիտի տան թէ 100,000 Հայեր ջարդուած են:

Սոֆիա, Պուլկարիա, Օգ. 19— Սահմանագլխոյ վերաբերութեամբ Պուլկարիոյ և թուրքիոյ միջև տեղի ունեցած վէճին իրեւ հետեանք, պուլկարիոյ կառավարութիւնն ծանուցագրած է Դրան որ եթէ վերջինս պատուիրակ չկարգէ սահմանագծի Յանձնախմբի մը համար, մինչև այս ինչ թուականը, այն առեւն Պուլկար զօրքըն հրաման պիտի ոտանան վերստին գրաւելու վերջերս թուրք զօրքերուն բռնած այն դիրքերն, զորս Պուլկարիա կը պահանջէ իրեւ իրեն վերաբերեալ հող:

Լոնտոն, Օգ. 19— Աթէնքէն առ «Կեդրոնական Լուրք» յղած հեռագիր մը կ'առէ թէ Մակեդոնիոյ մէջ ապստամբները երկու դիւղ այրեր են Քոզոնի գաւառակում և ութսուն հոգի սպաններ են:

Պէուլին Օգ. 20— Postը, այս քաղաքի, կ'առէ թէ Կրեաէի նոր յեղափոխական յանձնախումբը յունական զօջ պարզեր է:

Սուլթանը Կարմիր Խաչի ընկերութեան Նախագահին, Օրիորդ Քլարա Պարթընի, շնորհեր է երկրորդ կարգի Շէֆաքաթի շքանշանը:

Տիար Ա. Գահիրէէն կը գրէ մեզ.

Ինչպէս դիտէք, քաղաքիս մէջ, օգուտէս պատուաւոր տեղ մը, ընթերցարան աւանդ մը հաստատուած է, և սակայն, աւագ, ո՞վ է անկէ օգուտ քաղողը: Չորս հինգ հոգի միայն: Նոտարաններ, սեղաններ մագրելու կանոնաւորելու հոգ կը տարուի, տասնեակներով թերթեր և հանդէսներ կը կարդադրուին և գեղեցկապէս կը զարդարեն սրահը, բայց ո՞վ է գայնս թղթատուղ. չորս հինգ անձինք: Թող ներուի մեզ գանգաւալ որ հիմա գիր անդամներէն չորս հինգերորդը (ա-

մենը 50 էն աւելի է կարծեմ) բողբոջին հետի է ընթերցարարհէն: Իսկ բուն շըրջանէն դուրս հայ տարրը շատ պաղ աչօք կը նայի այս հաստատութեան, առարկելով թէ միայն քանի մը անձնասէրներու հանգստեան և հաճոյից համար է, և թէ ըմպելիքները այնքան սուղ արած են որ հասարակութիւնը չի կրնար մուտք գործել: Այոնք պատճառանք են, զի չունենոր դաւաճարդին համար արտօնութիւն կայ ձրի յաճախելու, իսկ միջին դասուն համար ամսական աուրքը 5 դահեկան է միայն:

Օգ. ի առաջին կիսուն նիւ Եորքի մէջ տօթը շարունակեց իրր տասն օր սաստկութեամբ մ'այնպիսի, որպիսին զառամեալ բնակիչք չեն յիշեր թէ երբէք տեսած լինին: Հարիւրաւոր մարդիկ այս մօտ քաղաքներում մեռան տաքէն, և 1,248 ձիեր, ինչպէս նաև բազում շներ ու կատուներ: Օգ. 14 էն իվեր օդը նորէն զովացաւ:

FACTS

ABOUT

ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է տեսնեն անգլիերէն տետրակին որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատարակուեցաւ:

Տետրակն կը պարունակէ կլատսթոնի մեծ ճառն խօսեցեալ ի Զէսթըր, և Տիւօնի յօդուածն՝ Գօնթէմփորէրի Րիվիւէն արատապուած: Այս յօդուած մինչև ցարդ Հայոց վերայ դրուածներուն ամենագորաւորն և ամենակատարեալն է, զոր կարգացող օտարական մի, որքան ալ գուլ խղճի տէր լինի կը կատարի թուրք հառաժարութեան դէմ: Հայրենակիցք պէտք է փութան տարածել այս տետրակ օտարականաց մէջ:

Գին օրինակին է 20 սէնթ: Առ նուազն 50 օրինակ մէկէն գնողին կը արուի 15 սէնթէն:

Դիմել ՀԱՅՔԻ խմբագրաստան:

Հասցէ

Editor of "HAIK" 341 West 23d St.,
NEW YORK,
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգրին է

ամեն երկրաց համար

երկու տարեք կամ տասն ֆրանք

կանխիկ

Ոմանք տուար թղթագրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի: Պէտք է կամ Րէճիսթըր անել նամակն վամ մընի օրաւոր յղել առ ի ապահովութիւն:

Կը խնդրեմք որ մընի օրաւորի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

ՆԻՒ ԵՈՐԿ

ՀԵԹ ՀԵՈՒՋ

անունն է Ուստըրի Ֆրօնթ փողոցին մէջ

գտնուող թիւ 14 վաճառատանն,

ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց,

ձեռնոց, շապիկ, օձիկ, փօղկապ,

ամենն ալ

ԱՄԵՆԱՍԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է ասի ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են:

BUSH & Co.
Պ Ո Ւ Շ Ե Ի Ը Ն Կ .
(Հաստատուել է 1849)

65 Front St., Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին
և չափաւոր գնով

T. HENRY DEWEY,
ՓՈՐՁԱՌՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆ
Եւ իւր Օգնական
SARKIS C. KEBABIAN,
ՕՐԷՆՍԳԻՏ

Կը հոգումք քաղաքային և միջադէպ
յին դատեր: Կուտումք օրինական խրատ:
Կրնայ ամեն ոք մեզ զիմեզ դործոյ հա-
մար կատարեալ վստահութեամբ: Հարկ
է, իւր օգտին համար, որ զիմոյն առա-
ջուց յատակ սրտէ անելիքն և իւր հետ
միտանող բերէ հարկաւոր թղթեր:

ՉՏիար Քէպապեան անձնուպէս անս-
նելու լաւագոյն ժամանակն է ժամ 1—5
յետ միջառոյց:

Պաշտօնատեղի և Հասցէ,
48 Wall St., New York, N. Y.

ՄԵՐՁԱՄԵՐՆ

ՄԱՐԶԱՐԱՆ 117 երեսէ բաղկացած
աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գա-
պարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ.
Ս. Գ. ի տպարանում, 1892ին: Առաջին մա-
սին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ
է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ա-
սուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է
կոյնի, բարի է, քաղէ, վաղէ, շրջան անէ,
սուին, հրացան բռնէ ու զործածէ, կրակէ
անհատարար, շարքով, ծնրադրութեամբ,
գետնամած ևն. ևն.: Երկրորդ մասում
կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻԲ ՄԱՐՏԱ-
ԳԻՏԱԿԱՆՔ» Այս զրբքն կարդալ և ըստ
այնմ իրենք զիրենք մարզել պարտին
Կրիտասարգք: Գին 50 սէնթ:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 77. Էվլիիու Նիւ Եորք
267 և 277. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Տարեկան բաժանորդագրինն է 10 ֆրանք,
(երկու տոլար): Հասցէն է—

Redaction du HANTES,
Couvent Mechitarist,
VIENNE, AUTRIHCE

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Հանդէս կիսամսեայ

25րդ տարի

Տարեկան բաժնեգրինն է, օտար երկ-
րաց համար 17 ֆրանք կամ 3 տոլար 40
սէնթ: Հասցէն է—

M. M. MAMOURIAN,
Smyrne, TURQUIE

ԲԱՉՄԱՎԷՊ

Ամսօրեայ

Տարեկան բաժանորդագրինն է 10 ֆրանք,
(երկու տոլար) Հասցէն է.—

Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

ՄՇԱԿ

Օրագիր

Տարեկան բաժանորդագրինն է 10 ռուբլի,
Ամերիկայի համար 6 տոլար: Հասցէն է—
Tiflis, Redaction du MSCHAK

Լ'ԱՌՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻԱ

Ամսօրեայ

Տարեկան բաժանորդագրինն է 3 տոլար 75
սէնթ: Հասցէն է—

33 De vere Gardens W, LONDON, ENG.

ՆԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԳԱՐԲԻԷԼԵԱՆԻ

(Այս գրքերն գնելու համար գրել կամ գրիմել Հայքի խմբագրատունն:)

ԱՐՈՒԵՍՏ

ԱՅԵՆԱՐՈՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի Հայերէն գրականութեան: Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարգալու և ճառախօսելու արուեստն, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ: Քսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՉԱՅՆ, ՇԵՉԱՆՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈՂՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՉԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՉԱՅՆԻ ՉՕՐՈՒԹԻՒՆ, ՉԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ՉԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք:

Գինն է Չուկէս Փրանք կամ 1 ռուպլի (50 սէնթ): Ութածալ 120 երես: 1891

ԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայ կական ինքիրն այլ ևս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է: Հետեւապէս հարցն այն չէ թէ կարօտ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իրրեւ ազգ: Զերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս ղերկնաւորն, բոլոր յափշտակեմ: Արտաքին ճշմարիտ աշակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ ղինեալ ալ մեր բարձրացունեմք: Ոչ թէ բան մ'անելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն:

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես: 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած:

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՅԵՆԱՐՈՍՈՒԹԵԱՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերըն պատմարանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով Հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ Հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որ դեպքն որ կարենայ իրրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն:

Գինն է 1 Փրանք (20 սէնթ) 61 երես: 1888

ԱՅԵՆԱՐՈՍՈՒԹԵԱՆ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են Զէնթօն, ՍՈՒՐ, ՀՆԱՄ Է, ԴՐԱՆ ԳԱՂՏԻՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ՉԱՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳՔ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔԻ ՈՒԺՈՎ: Գինն է 1 Փրանք (20 սէնթ) 71 երես: 1893

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՐԵՆԱՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն Հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ: Այդ իմաստասիրութեանէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային իտէսականի և դատարարական վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են:

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես: 1894

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով:

Ա. տարի,	1 տոլար	50 սէնթ	կամ	7.5 ֆր.
Բ. " "	2 " "	կամ	10 ֆրանք:	
Գ. " "	2 " "	" " "	" " "	
Դ. " "	2 " "	" " "	" " "	
Ե. " "	2 " "	" " "	" " "	

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մ. Ս. ԳԱՐԲԻԷԼԵԱՆԻ